Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

633.5
Z-21
24 SEP 2010
330
633.5
Z-21
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Սույն հրահանգը արտատպված է Համամիութենական Բամբակկոոպերացիայի կենտրոնի և Գլխբամբակկոմի հրահանգից՝ մի քանի աննշան փոփոխություններով։

ՀՐԱՀԱՆԳ

1931 թվի բամբակացանքի ծրագրերի քննության յեվ հայտեր հավաքելու կարգի մասին

ԶԵՌՆԱՐԿՎԵԼԻՔ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1931 թ. բամբակացանքի կամպանիան վճռական նշանակություն և ունենալու վոչ միայն բամբակագործության հնգամյակի իրականացման ասպարիզում, այլ և Միութենական տեքստիլ արդյունաբերությունը՝ արտասահմանյան հումույթի կախումից ազատագրելու խնդրում։

Այս հիմնական դրույթից բնականորեն բղխում է՝ կազմակերպել 1931 թ. բամբակացանքի ծրագրերի քննությունը և հայտերի հավաքումն այն հաշվով, վորպեսզի առաջիկա կամպանիան իրապես ապահովի 1931 թվի բամբակացանքի ծրագրերի կատարումն ամբողջությամբ։

Ծրագրերի քննության առնելը և հայտեր հավաքելու աշխատանքները պիտի տարվեն իբրև մասսայական կամպանիա, տալով վերջինիս հասարակա-

31 MAY 2013

19.1

կան-քաղաքական բնույթ։ Այս կամպանիայի շուրջ պիտի համախմբել՝ բոլոր բատրակ-չքավորական մասսաները, գյուղի միջակներին և կոլտնտեսության անդամներին։

Ծրագրերի քննարկումը և հայտեր հավաքելը պիտի տարվի հիմնական մի նշանաբանի տակ—«Բոլոր պիտանի բոլոր հողամասը հատկացնել բամբակենու ցանքին»։

Բամբակացանքսերի ծրագրերի քննության և հայտեր հավաքելու աշխատանքին զուգընթաց՝ պիտի բատրակ-չքավորական և միջակ գյուղացիական մասսաները դասակարգայնորեն կազմակերպել հողդասի գործման կոլլեկտիվ ձևերին անցնելու նպատակով։ Այս կամպանիան անցկացնելիս՝ չքավորական և գյուղական ժողովներում պետք է հատկապես կանգ առնել և բացատրել կոլտնտեսությունների նվաճումները և նրան առավելություններն անհատական տնտեսության հանդեպ։

Նույն ժողովներում առավելապես պետք է բացատրել՝ մեք. տրակտ. կայանի առաջիկա աշխատանքների ծրագիրը, տրակտորի ոգտագործման առավելությունը կոլտնտեսություններում՝ հանդեպ անհատական տնտեսության, կոլտնտեսություններին տրվող արտոնությունները, կոլտնտեսության բերքից առաջացած յեկամուտների բաշխումը գործնականում։

Ծրագրերի քննության և հայտեր հավաքելու կամպանիան՝ խոշոր ազդակ պիտի ծառայի և առաջարկների՝ բատրակ-չքավորական և միջակ գյուղացիական մասսաների ուժեղ հոսանք դեպի կոլտնտեսությունները։

Բամբակացանքսերի ծրագրերի քննության և հայտեր հավաքելու պրոցեսում՝ կուսակցության և առավարության ձեռնարկումները ցանքսերի ընդարձակման ասպարեզում՝ կընթանան կուլակային տարրերի ամենաուժեղ դիմադրության պայմաններում։ Ոպերատիվ և հասարակական կազմակերպությունը պետք է ապահովեն բատրակ-չքավորական, ակտիվ և միջակ գյուղացիական մասսաների այնպես կազմակերպություն, որպեսզի այս կամպանիամ կուլակային ելեմենտներին հասցնվի վճռական հարված։

Այս իսկ նպատակով, բոլոր չքավորական, կոլտնտեսականների և գյուղական ժողովներում առաջին հերթին պիտի բացատրել կուլակային—հակահեղափոխական յելույթների բնույթը և նրանց բոլոր պրովոկացիոն գործողությունները՝ ուղղված բամբակացանքների ծրագրերի կատարման դեմ։

Անհրաժեշտ է լայնորեն մոբիլիզացիայի յենարկել գյուղի չքավոր, բատրակ մասսաներին և կոլտնտեսականներին՝ կուլակային տնտեսություններին առաջիկա ցանքսի վերաբերյալ վճռական առաջադրություններ անելու ասպարեզում։ Գյուղի բատրակ-չքավորական մասսաներին և կոլտնտեսականներին այժմանից պետք է կազմակերպել և նրանց վրա պարականություն դնել՝ մասսայական հսկողություն ունենալ յուրաքանչյուր կուլակ տնտեսության վրա, որպեսզի վերջինս իրեն պիտանի հողն այլ կուլտուրաների չհատկացնի։

Առաջիկա բամբակացանքսի ծրագրերի քննության և հայտեր հավաքելու աշխատանքի պրոցեսում,

պետք է առանձնակի ուշադրություն դարձնել՝ կուլակային տնտեսություններին բամբակացանքի համար տրվող առաջադրությունները սահմանելու ասպարեզում։ Նրանց պետք է տրվի բամբակենու ցանքի համար առավելագույն ծրագիր, սակայն վոչ պակաս տվյալ գյուղի համար սահմանած բամբակացանքի տեսակարար կշռից։

Բոլոր չքավորական, գյուղական և կոլտնտեսականների ընդհանուր ժողովներում լայնորեն պետք է բացատրել բամբակացաններին տրվող բոլոր արտոնությունները, այսինքն պետք է բացատրել բամբակացաններին տրվելիք հացամթերքների բաշխման յերաշխավորյալ կարգը, վորոշ բամբակացաններին խամ հողեր ոգտագործելու դեպքում տրվելիք արտոնությունները, այլ և այն վարկային ոգնությունների մասին, վորպիսիք տրվելու յեն գյուղինվենտար, լծկան անասուններ ձեռք բերելու և աշնանավար կատարելու համար։

Առանձնապես պետք է կանգ առնել և բացատրել կոլտնտեսություններին տրվելիք արտոնությունները, այլ և կոլլեկտիվ տնտեսության առավելություններն անհատականի հանդեպ։

Ներկա կամպանիայի հետ կապված բոլոր ձեռնարկումները պետք է ընթանան սոցմրցման, հարվածայնության և հանդիպակ պլաններ ցուցադրելու նշանաբանի տակ։

Այս կամպանիայի կարևորությունը հարկադրում է կոոպերատիվ սիստեմի բոլոր ողակներին, նրա ղեկավար և տեխնիկական բոլոր աշխատակիցներին դիտակցել խնդրի վոչ լրջությունը և պատասխանատվությունը՝ 1931 թ. բամբակացանքի ծրագրի կատարման ասպարեզում։ Այս հանգամանքը ստիպում է ուժերի խիստ լարում կատարել և կազմակերպել բատրակ չքավորական մասսաներին և կոլտնտեսականներին բամբակացանքի ծրագրի մինչև գյուղ արտադրական ընկերություն, կոլտնտեսություն և մանավանդ կուլակային տնտեսություն հասցնելու և ճշտորեն սահմանված ժամկետներում հայտեր հավաքելու գործում։

Բամբակկոոպերացիայի, տեղական խորհրդային որգանների և հասարակական կազմակերպությունների բոլոր ուշադրությունը պետք է բևեռած լինի միայն մի ուղղությամբ՝ ապահովել վոչ միայն առաջադրված ծրագրերի կատարումն ամբողջությամբ, այլ յեվ տեղական ջրային յեվ տնտեսական հնարավորությունների համեմատ՝ այդ ծրագրերը գերակատարել։

ԲԱՄԲԱԿՅԱՆՔԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՅԵՎ ԿԱՐԳԸ

Բամբակկոոպերացիայի հանրապետական կենտրոնները՝ տեղական ժողկոմխորհի կողմից հաստատված ծրագրերը փոխադրում են շրջանները սույն թվի դեկտեմբերի 10-ից վոչ ուշ։ Շրջաններում առաջադրված ծրագրերը քննության են առնվում դեկտեմբեր 10—20 ժամանակամիջոցում և տեղական գործկոմների կողմից հաստատվելուց հետո՝ այդ ծրագրերը փոխադրում են գյուղերը և կոլտնտեսությունները նույնպես քննության առնելու նպատակով։ Դեկտեմբերի 20 ից մինչև 1931 թվի հունվարի 15 ը տեղերում հրա-

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. Ա. Մասիսյան
56189·66

վիրվում են գյուղխորհուրդների պլենար նիստեր, հանրավորական, գյուղական կոլտնտեսությունների ընդհանուր ժողովներ՝ քննության առնելու բամբակացանքի ծրագրերը և միաժամանակ, նույն ժամանակի տևողության ընթացքում՝ կատարում են հայտեր հավաքելու և նրանց հաստատելու աշխատանքները։

Հունվարի 20-ին՝ գյուղերում կատարված ծրագրերի քննության հետ կապված բոլոր նյութերը, բամբակացանների հայտերը ցուցակագրման քարտերի հետ միասին ներկայացվում են շրջբամբակմիությունները, որոնք հունվարի 20-ից մինչև 25-ը քննության են առնում և հաստատում։ Հունվարի 28 ին՝ ըստ հայտերի կազմած և տեղական շրջգործկոմների կողմից հաստատված՝ ծրագրերն ուղարկվում են բամբակոպերացիայի հանրապետական կենտրոններին։

Վերը հիշված ժամկետներում շրջբամբակմիությունները և շրջկոլմիությունները հանրապետական բամբակոպերացիայի կենտրոնից ստացած ծրագրերն իրենց վարչության և խորհրդի միացյալ նիստերում՝ շրջանային հիդրոտեխնիկի, ագրոնոմի, գյուղարտադրական ընկերությունների, կոլտնտեսությունների, բամբակաղտիչ գործարանի, մեք. տրակ. կայանի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ մշակում են ցանքսերի ծրագրերն ըստ անհատական և կոլեկտիվ հատվածների (սեկտոր)։

Շրջբամբակմիության և շրջկոլմիության վարչությունների միացյալ նիստերում ընդունված և հաստատված բամբակացանքի ծրագրերը՝ ըստ անհատական և կոլեկտիվ հատվածների՝ բաշխում են առանձին կոլտնտեսությունների և գյուղարտադրական ընկերությունների միջև հետևյալ կարգով։

ա) Կոլեկտիվ հատվածի բամբակացանքի ծրագրի բաշխումն առանձին կոլեկտիվների միջև վորոշվում է Ջրջկոլմիության վարչության հատուկ նիստում՝ մասնակցությամբ կոլտնտեսությունների նախագահների և ագրոպերսոնալի ներկայացուցիչների։

բ) Անհատական հատվածի ծրագրերի բաշխումը կատարում է շրջբամբակմիությունն իր վարչության նիստում՝ մասնակցությամբ գյուղարտադրական ընկերությունների ներկայացուցիչների։

Այս բոլորից հետո բամբակացանքի ծրագրերը ներկայացվում են շրջգործկոմի պլենումին ի հաստատություն։

Ծանոթություն։ Այն շրջաններում, վորտեղ գոյություն չունի շրջկոլմիություն, նման վայրերում բամբակացանքի ծրագրերի բաշխումն ըստ առանձին կոլտնտեսությունների՝ կատարում և ղեկավարում է շրջանային միության կոլսեկցիան։

Անհատական և կոլեկտիվ հատվածների բամբակացանքի ծրագրերը տեղական շրջգործկոմների կողմից հաստատվելուց հետո, այդպիսիները հանձնվում են գյուղխորհուրդներին, գյուղարտադրական ընկերություններին և կոլխոզներին ի քննություն։

Շրջբամբակմիությունից ստացած ցանքսի ծրագրերը գյուղարտադրական ընկերությունն ամենից առաջ դնում է իրեն ընկերության չքավորական խմբակի քննությանը, վորից հետո (հիշյալ խմբակի առաջադրությունների հետ) դրվում է իրեն վարչու-

թյան նիստի քննության՝ գյուղատնտեսի, միրաբի, կոոպերատիվ ակտիվի մասնակցությամբ, վորտեղ և տվյալ ծրագիրը բաշխվում և ըստ առանձին գյուղերի մինչև։

Գյուղի համար առաջադրված ծրագիրը հանձնվում և գյուղխորհրդին ի հաստատություն։

Շրջկոմիությունները նույնպես իրենց հերթին ուղարկում են գյուղխորհրդներին ի հաստատություն կոլտնտեսությունների ծրագրերը՝ ըստ համապատասխան գյուղերի. գյուղխորհրդների կողմից հաստատված ծրագրերը փոխադրվում են գյուղարտադրական ընկերության և կոլտնտեսության անդամների քննությանը։

Կոլտնտեսության վարչությունը՝ շրջկոմիությունից ստացած ցանքսի ծրագիրն՝ առաջին հերթին գրանում և տվյալ կոլտնտեսության չքավորական խմբակի քննության, ապա՝ (վերջինիս յեզրակացության հետ միասին) կոլտնտեսության արտադրական խորհրդակցությանը, մասնակցությամբ գյուղատնտեսների և բրիգադաների ղեկավարների, վորից հետո ցանքսի ծրագիրը վերջնականապես հաստատվում և կոլտնտեսության վարչության կողմից։ Վերը հիշված ժողովներին անպայման մասնակցում և շրջկոմիության ներկայացուցիչը։ Շրջկոմիությունը՝ գյուղական ցանքսային կոմիսիաների հետ միասին՝ նախորոք մշակում և կոլտնտեսությունների խորհրդակցությունների համար որացուցցային ծրագիր և այս մասին առաջուց հայտնում և կոլտնտեսություններին։

Ծանոթություն։ Նախ քան ցանքսի ծրագրների քննության անցնելը և հայտեր հավաքելը՝

տեղերում կազմակերպվում են շրջանային և ցանքսային գյուղական կոմիսիաներ։

ա) Շրջանային կոմիսիաները կազմվում են հետևյալ հիմնարկների ներկայացուցիչներից՝ շրջգործկոմի, շրջբամբակմիության, շրջկոլմիության, մեք. տրակ. կայանի (յեթե այդպիսին կա տվյալ շրջանում) բամբակաղտիչ գործարանի և շրջագրոնոմի մասնակցությամբ։

բ) Գյուղական ցանքսային կոմիսիաները կազմվում են գյուղխորհրդի, կոլտնտեսության, գյուղարտադրական ընկերության, չքավորական խմբակի, գյուղարտադրական խորհրդակցության ներկայացուցիչներից և միրաբի մասնակցությամբ։

ԲԱՄԲԱԿԱՑԱՆՔՍԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԲԱՄԲԱԿԱՑԱՆՆԵՐԻՑ ՈՒ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԱՅՏԵՐ ՀԱՎԱՔԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Տեղերում ցանքսի ծրագրերի քննությունը և բամբակացաններից ու կոլտնտեսություններից հայտեր հավաքելու աշխատանքը կատարում են շրջանային և գյուղական ցանքսային կոմիսիաները և շրջանի կողմից առանձնացրած հատուկ աշխատակիցները, վորոնք աշխատում են շրջցանքսային կոմիսիայի ղեկավարությամբ և շրջկոմիության ու շրջբամբակմիության հրահանգիչների ղեկավարությամբ։

Ծանոթություն։ Գնման կայանի վարիչները վրա պարտականություն և դրվում՝ աջակցելու գյուղցանքսային կոմիսիաների աշխատանք-

ներին այն գյուղերի սահմաններում, վորոնք ամրացված են տվյալ կայանին։

Ցանքսային կոմիսիաները նախ քան շրջան մեկնելը ստանում են շրջբամբակմիությունից կամ համապատասխան գնման կայանից անցյալ տարվա բամբակացանների ցուցակագրած քարտերը և նորերը— ընթացիկ տարվա ցուցակագրության համար։ Գյուղխորհուրդները իրենց հերթին տրամադրում են հիշյալ հանձնաժողովներին իրենց գյուղի համար հաստատած ցանքսի ծրագիրը։

Ծանոթություն։ Այնտեղ, վորտեղ դեռ չի սկսված բամբակացանների առաջիկա տարվա ցուցակագրումը, շրջբամբակմիությունները կամ գնման կայանները հիշյալ հանձնաժողովներին տալիս են ցուցակագրելու համար նոր քարտեր. այնտեղ, վորտեղ այդ աշխատանքները վերջացած են—լրացրած քարտերը։

Գյուղխորհրդի կողմից հաստատված ցանքսի ծրագիրը գրվում և տվյալ գյուղի կամ կոլխոզի չքավորական խմբի քննությանը, ապա չքավորական խմբակի առաջադրություններով՝ փոխադրվում և բամբակացանների կամ կոլտնտեսության անդամների ընդհանուր ժողովի քննության։

Չքավորական խմբակների ժողովներում պետք է քննության առնել հետևյալ հարցերը.

1. Անցյալ տարվա բամբակացանքսի արդյունքները, հնդավորի հանձնման ծրագրի և վարկերի գանձման ընթացքը՝ տվյալ գյուղում։

2. 1931 թ. բամբակացանքսի և խամ հողերի ոգտագործման ծրագիրը։

3. Կուլակ տնտեսությունների ցուցակը՝ ըստ տվյալ գյուղի և յուրաքանչյուր կուլակ տնտեսությանը առաջադրվելիք ցանքսի ծրագիրը։

4. 1931 թվին բաշխվելիք հացի, արդյունաբերական ապրանքների կարգը և հարկային արտոնությունները։

5. Մանր վոռոգման աշխատանքների ծրագիրը։

Գյուղի և կոլտնտեսության ընդհանուր ժողովներում իր հերթին քննության են առնվում վոչ միայն վերը հիշված խնդիրները, այլ և տեղական մեք. տրակտ. կայանի վարիչի զեկուցումը՝ կայանի առաջիկա աշխատանքների մասին։

Բացի այդ, բոլոր չքավորական և բամբակացանների գյուղական ընդհանուր ժողովներում՝ միաժամանակ լսվում են մոտակա կոլտնտեսության նախագահի զեկուցումը՝ իրեն կոլտնտեսության կողմից կատարած ցանքսի և բերքի իրացման ծրագրերի կատարման մասին։

Առաջիկա բամբակացանքսի ծրագրերի քննության ժամանակ՝ ընդհանուր ժողովներում պետք է պարզել, թե բամբակացանի տարածության ավելացումն առաջիկայում, վոր կուլտուրաների հաշվին և ինչ չափով է կատարվելու. սրան զուգահեռ՝ պետք է պարզել, թե տվյալ գյուղում ինչ տարածությամբ խամ հողեր պետք է տրամադրվեն բամբակին։ Այլ կուլտուրաների կրճատման և խամ հողեր ոգտագործելու ծրագիրը պետք է բաշխվի և հանձնարարվի յուրաքանչյուր տնտեսությանն առանձնապես։ Գյուղական ընդհանուր ժողովի կողմից, տվյալ գյուղի և կոլտնտեսության ծրագիրը հաստատվելուց հետո, գյուղարտադրա-

կան ընկերության ներկայացուցիչը սկսում է բամբակացաններից հայտեր հավաքել և առանձնակի հարցումների միջոցով՝ ցուցակագրում կատարել։

Գյուղարտադրական ընկերության ներկայացուցիչը յուրաքանչյուր բամբակացանից առանձին-առանձին հարցնում է, թե վերջինս վորչափ բամբակ է ուզում ցանել առաջիկա տարում։

Անցյալ տարվա բամբակացանների հայտերը մտցվում են նախկին տարվա ցուցակագրման քարտերում, իսկ նոր բամբակացանների հայտերը նոր քարտերում։ Վերջին դեպքում, բացի բամբակացանքի տարածության մասին արած հայտից, նոր քարտում մտցնվում են նաև բամբակացանի սոցիալ տնտեսական դրության վերաբերյալ տեղեկությունները, այլ և հարկային տվյալները՝ դիֆերենցիալ վարկավորում կատարելու համար։

Ծանոթություն։ Այն դեպքում, յերբ բամբակացանների ցուցակագրումը վերջացրված է, գյուղարտադրական ընկերության ներկայացուցիչը յերկրորդ անգամ արած հարցապնդման միջոցով՝ համապատասխան ուղղումներ և մտցնում ցուցակագրման քարտերում։

Ցուցակագրման քարտերը լրացնելիս, առանձնապես ուշադրություն պետք է դարձնել այն բամբակացանների վրա, վորոնք ընթացիկ տարում ավելի քիչ տարածություն են ցանկանում հատկացնել բամբակենուն՝ անցյալ տարվա համեմատությամբ։ Գյուղարտադրական ընկերության ներկայացուցիչն առանձնակի ուշադրություն պիտի դարձնի պարզելու նման յերևույթի պատճառը։ Այս վերջին բամբակացանների

ցուցակագրման քարտերը պետք է ընդհանուր ժողովում առանձնապես քննության առնել։

Ցուցակագրման քարտերում անպայման պետք է մտցվեն բամբակացանի կողմից վճարվող հարկի գումարը և նրա հարկային թերթի համարը։

Յուրաքանչյուր բամբակացան ինքն է անմիջապես անում բամբակացանքի մասին իր հայտը. վոչ մի դեպքում չի թույլատրվում ուրիշի համար հայտեր ներկայացնելը։ Հայտերի հանրագումարները կազմվում են ցուցակագրման քարտերի միջոցով և միաժամանակ պարզվում, թե տվյալ գյուղում կամ կոլտնտեսության մեջ բամբակի համար վորքան տարածություն և ցուցակագրված. ապա կատարվում է ստուգում, թե հայտարարված ցանքսերի տարածությունը վորքան և համապատասխանում ընդհանուր ժողովի կողմից հաստատված ծրագրին։ Այս բոլորից հետո հավաքած հայտերը՝ նախ ներկայացվում են չքավորական խմբակի, ապա՝ գյուղի ընդհանուր ժողովի քննությանը։

Այս ժողովներում մանրամասնորեն քննության են առնվում յուրաքանչյուր բամբակացանի մասին յեղած տվյալները (վորոնք արձանագրված են ցուցակագրման քարտերում), վորից հետո ժողովը հանում և համապատասխան վորոշում՝ յուրաքանչյուր բամբակացանի կողմից հայտարարած տարածությունը փոփոխելու կամ հաստատելու մասին, նման ժողովներում առանձնապես ուշադրության պիտի առնվեն այն բամբակացանները, վորոնք պակասեցրած հայտեր են ներկայացրել անցյալ տարվա ցանքսերի համեմատությամբ։

Յեթե հավաքած հայտերի հանրագումարը ցույց է տալիս՝ ընդհանուր ժողովի կողմից հաստատված բամբակացանքի տարածության նվազում, այդ դեպքում ընդհանուր ժողովը քննության է առնում, թե պակաս հայտարարված տարածությունը վոր բամբակացանների միջև պիտի բաշխվի, վորպեսզի ընդհանուր ժողովի կողմից նախորոք հաստատված ծրագիրն ամբողջությամբ իրացված համարվի։

Ամեն անգամ, այս կամ այն բամբակացանի կողմից նախորոք հայտարարված տարածությունն ավելացնելու դեպքում՝ բազմակողմանի կերպով պիտի քննվի և հաշվի առնվի տվյալ տնտեսության արտադրական հնարավորությունները. միաժամանակ պիտի վորոշել ոժանդակության այն միջոցները, վորոնք անհրաժեշտ են ցույց տալ տվյալ տնտեսությանը՝ իրեն վրա վերցրած պարտականությունը լրիվ կատարելու համար։

Ընդհանուր ժողովը, բամբակացանի կողմից նախորոք հայտարարված տարածությունը կամ այլ ցուցանիշները փոփոխելու դեպքում, համապատասխան ուղղում և մտցնում վերջինիս ցուցակագրման քարտում. նման դեպքերն տոանձնապես արձանագրվում են ընդհանուր ժողովի արձանագրություններում։ Ընդհանուր ժողովի արձանագրությունները չբարդացնելու նպատակով, անհրաժեշտ է հիշյալ արձանագրություններում հիշատակել միայն փոփոխության յենթարկված հայտերը. իսկ մնացյալ հայտերը մտցվում են արձանագրության մեջ ընդհանուր գումարով։

Ընդհանուր ժողովի արձանագրությունն անպայման պիտի ստորագրվի ժողովի նախագահի և քարտուղարի կողմից։ Հիշյալ արձանագրություններին պետք է կցել ժողովին մասնակցողների ցուցակը՝ համապատասխան ստորագրություններով։ Ընդհանուր ժողովի արձանագրությունները և ցուցակագրման քարտերը հանձնվում են գյուղատնտեսական ընկերություններին, իսկ վերջիններս իրենց հերթին հանձնում են իրենց գնման կայաններին կամ շրջմիությանը։

Գնման կայաններն՝ իրենց շրջանում գտնվող գյուղատնտեսական ընկերությունների և կոլտնտեսությունների ցանքսերի ծրագրերի քննության և հայտեր հավաքելու աշխատանքներն ավարտելուց հետո, իրենց կողմից հավաքած բոլոր նյութերը համապատասխան հանրագումարներով ներկայացնում են շրջբամբակմիությանը։ Այս վերջին նյութերը հիմք են ծառայում շրջմիության վարչությանն՝ իրենց նիստերում հաստատելու ստացված հայտերը։

Այն դեպքում, յերբ վորևե գյուղ վորոշում է հանում կազմակերպել իրենց գյուղում կոլտնտեսություն, մինչև վերջինիս որինական ձևակերպումը և հաստատումը՝ հայտեր հավաքելը կատարվում է անհատական կարգով։ Հիշյալ կոլտնտեսությունը ձևակերպվելուց հետո, բոլոր այն բամբակացանների քարտերը, վորոնք մտել են կոլտնտեսության մեջ, հանձնվում են կոլտնտեսության վարչությանը և տվյալ կոլտնտեսության համար կազմվում է մի ընդհանուր նոր քարտ։ Կոոպերատիվ կազմակերպությունները պետք է ամեն կերպ ոժանդակեն տվյալ կոլտնտեսության շուտափույթ ձևակերպմանը։

Անհատ բամբակացանը, յերբ ցանկություն և հայտնում մտնել գոյություն ունեցող կոլտնտեսության մեջ, և յերբ նրա ընդունելությունը համապատասխան կարգով ձևակերպվում է, նրա ցուցակագրման քարտն և հայտը անմիջապես հանձնվում է տվյալ կոլտնտեսությանը և ավելացվում վերջինիս բամբակացանության ծրագրին։

Գնման կայաններից և գյուղարտադրական ընկերություններից ստացած ցանքսերի վերաբերյալ հայտերը շրջմիության վարչությունը և խորհուրդը հաստատում են իրենց միացյալ նիստում։ Ներկայացրած հայտերի մասին շրջմիության կողմից կայացրած վորոշումը մտցվում է յուրաքանչյուր բամբակացանի քարտի համապատասխան սյունակում։ Շրջմության վարչությունը և խորհուրդը նման վորոշում կատարելիս, նկատի յեն առնում արձանագրություններում հիշատակված բոլոր նկատողությունները և կատարած ուղղումները։ Շրջմնությունները այս կամ այն բամբակացանի հայտը քննության առնելիս՝ առանց տվյալ բամբակացանի համաձայնության՝ վոչ մի փոփոխություն (ցանքսի տարածության հավելման իմաստով) անելու իրավունք չունեն։

Բամբակացանների հայտերի քննությունը և հաստատումը կատարվում է շրջմության և խորհրդի միացյալ նիստում, վորին ներկա են լինում անպայման՝ տվյալ բամբակազտիչ գործարանի վարիչը, բամբակկոոպերացիայի հանրապետական կենտրոնի հրահանգիչը, տեղական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները և գյուղարտադրական

ընկերությունների և կոլտնտեսությունների նախագահները։

Նման կարգով բամբակացանի ցուցակագրման քարտում մտցրած թվերը համարվում են վերջնական, վորի հիման վրա ել հետագայում կատարվում է կոնտրակտացիոն պայմանագրերի կնքում և վարկերի բաց թողում։

Միաժամանակ անհրաժեշտ է նկատի առնել, վորպեսզի նախկին բամբակացանների միջև չառաջանան արհեստականորեն նոր անտեսություններ լրացուցիչ վարկեր ստանալու նպատակով։

Հայտեր ընդունելու ժամանակ, նոր առաջացած (բաժանված) անտեսության հայտը հաստատվում է և հաշվի է առնվում միայն գյուղխորհրդի հատուկ վկայությունից հետո։

Բամբակազտիչ գործարանի վարիչը և ակտիվ ամենալայն մասնակցություն պիտի ցույց տան բամբականքսի ծրագրի քննության և հայտեր հավաքելու գործին, ոգնելով և ոժանդակելով միաժամանակ բամբակկոոպերացիային հիշյալ աշխատանքների կատարմանը։

Յուրաքանչյուր բամբակազտիչ գործարանի վարիչի վրա անհատական պարտականություն է դրվում՝ իրեն գործարանի վարչության սահմանում՝ առաջադրված բամբակացանքսի ծրագրի լրիվ իրացման և հայտեր հավաքելու գործում։

Այդ նպատակով բամբակազտիչ գործարանի վարիչը պարտավոր է շրջմության հետ միասին վորոշել այն գյուղարտադրական ընկերությունների ցուցակը, վորոնք պիտի ամրացվեն գործարանի վարչու-

ՀՍՍՌ-ԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

թյանը։ Հիշյալ գյուղատաղրական ընկերություններում՝ աշխատանքի նորմալ ընթանալու պատասխանատվությունը դրվում է գործարանի վարիչի վրա, վոր և անձնապես պատասխանատու է այդ ընկերությունների աշխատանքի ընթացքի և արդյունքի համար։

ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՅԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Հայտեր հավաքելու ընթացքի մասին զնման կայանները կամ գյուղատնտեսական ընկերություններն ամեն որ հեռագրով (յեթե հեռու են գտնվում) ըստ № 1 տեղեկագրի ձևի հեռագրում են շրջմիությանը. վերջինս նույն ձևով և նույն կարգով հեռագրում է իրեն կոոպերատիվ կենտրոնին և համապատասխան գործարանի վարչության։

Հնգորյա № 2 տեղեկագրերը զնման կայանները և գյուղատաղրական ընկերությունները ներկայացնում են իրենց շրջմիությանը. վերջինս իրեն կոոպերատիվ կենտրոնին և համապատասխան գործարանի վարչության։ Հանրապետական կոոպերատիվ կենտրոնը հիշյալ (№ 2) տեղեկագիրը ներկայացնում է Միութենական կոոպեր. բամբակկենտրոնին—Տաշկենտ, վերջինիս անդրկովկասյան ներկայացուցչության—Թիֆլիս և պատճենը Գլխբամբակկոմի անդրկովկասյան բաժանմունքին։ Գործարանի վարչությունները № 1 և 2 տեղեկագրերը հաղորդում են մատնանշված ժամկետներում Գլխբամբակկոմի անդրկովկասյան բաժանմունքին - Թիֆլիս։

№ 1 Տեղեկագրի ձևը

Ուղարկում են զնման կայանները և գյուղատաղրական ընկերությունները—շրջմիությանը, վերջինս իրեն հանրապետական կենտրոնին և համապատասխան գործարանի վարչության։

ՀԱՅՏԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ՁԵՎԸ։

00/00 (հայտնման որաթիվը և ամիսը) հավաքած ե..00/00 (համարիչը ցույց է տալիս անհատական տնտեսությունների թիվը, հայտարարը—կոլտնտեսությունների թիվը) հեկտար,.00/00 (համարիչը—անհատական տնտեսությունների հայտարարած տարածությունն և ցույց տալիս, հայտարարը—կոլանտեսություններին)

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Հեռագրական տեղեկությունների տվյալները հայտնվում են աճող թվերով։

2. փակագծերի մեջ բերվածները հեռագրում չեն գրվում։

Տպ. հրատ. «Զարյա Վոստ.» Պատ. 3376 Գլավ. 2322 Քան. 500

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
NL0280724

№ 2 Տեղեկագիր (հնգորյա)

Հնգորյա տեղեկագրերը ներկայացնում են գյուղատնտեսական ընկերությունները և գնման կայանները շրջմասնաբաժիններին, վերջիններս իրենց հանրապետական կոոպերատիվ կենտրոնին և համապատասխան գործարանի վարչության։ Հանրապետական կոոպերատիվ կենտրոնները նույն տեղեկագրերի ամփոփումները ուղարկում են միութենական բամբակապերատիվ կենտրոնին—Տաշկենտ, վերջինիս Անդրկովկասյան ներկայացչության—Թիֆլիս, պատճենը Անդրբամբակկոմին։ Գործարանները ուղարկում են հնգորյա տեղեկագրերը անմիջապես Անդրբամբակկոմին—Թիֆլիս։

№ 2 Տեղեկագրի ձևը

1931 թվի ցանքսի հյուսելու հավաքելու մասին
Սեպտեմբերի սկզբից մինչև.....

Հանրապետության գյուղատնտեսության շրջմասնաբաժնի անվանումը	Բամբակացանները							Հայտնված տարածություն					
	ընդամենը	Նույն հաշվում						ընդամենը	Նույն հաշվում				
		կոլտնտեսության	կոլտնտ. տնտես. թվով	Անհատական					կոլտնտեսության	Անհատական			
				Զքավոր	Միջակ	Ունևոր	Կուլակ			Զքավոր	Միջակ	Ունևոր	Կուլակ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14